

8. Ի—օ. միայն *fratres*՝ քրոնք և զափ՝ վե-
շապ բառերուն մէջ:

9. Ի—ա. այս ալ մուսնա՝ մասանի և բրմն-
դի՝ թիթեռնիկ ձևերուն մէջ միայն:

10. Աւելորդ Ի մտած է ճիճի՝ ճճի բառին
մէջ:

11. Մի քանի բառերու ծայրն աւելցուած է
րե կամ ք մտքը՝ որոնք անշուշտ նախնական Ի-ի
մը ձևափոխութիւններն են. այս յաւելուածն
ուշին՝ մօռք՝ մօռ. պնայր՝ պնայ. ըշիրնայր՝ աշ-
քակապ. բրմնդի՝ թիթեռնիկ—խփի՝ խուփ. ըրիկ՝
երէկ՝ ծիխ՝ ձախ. մօրկ՝ մօր (եւակ):—նայն ք յա-
ւելուածը բառի մէջ կճեղակ՝ կճղակ:

(Պէշ ք—նայն—)

Հրաշխայ Ե. Աճառեան



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵԳԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Gölzer. Die Genesis der byzantinischen
Themenverfassung, Leipzig, 1899. Verl.
Teubner.

Ուսուցչապետ Գեղեցիկի անունը անյայտ
չէ նոյն իսկ մեր միջակ ընթերցողներին. իրա-
ւամբ նա հաշակ է վայելում Եւրոպայի սա-
կաւաթիւ հայազէտների մէջ: Բողմանիւ են
նորա զիտնական երկերը, բայց մեզ համար
նշանակութիւն ունին յարգելի ուսուցչապետի
այն գործերը, որ մեր աղքատիկ հայագիտա-
թեանն են վերաբերում: Ուսուցչապետ Գե-
լցերի հայագիտական գրուածքները հետեւեալ-
ներն են 1) Die Anfänge der armenischen
Kirche—Հայոց եկեղեցու սկզբնաւորութիւնը
1895 թ. 2) Zur armenischen Götterlehre
2) Real-Encyclopädie հանրահաշակ աստուա-
ծարանական բառարանի Armenien յօդուածը.
4) Sextus Iulius Africanus und die byzanti-
nische Chronographie I Theil u. II Theil 1.
Abtheil. Leipzig, B. G. Teubner 1880—1885.
II Theil 2 Abt. Leipz. I. C. Hinrichs 1898*:
Մեզ համար առանձին նշանակութիւն ունի

այս երկի երկրորդ մասի երկրորդ բաժինը, որ
ասորա-հայկական ժամանակագիրներին է վե-
րաբերում, այսինքն Միքայէլ Ասորի, Մար-
Սողմոն ԺԳ զարու, Ստեփաննոս Տարօնեցի
Ասորիկ, Սամուէլ Անեցի, Վարդան մեծ և
Միսիմար Այրիվանեցի: Վերջապէս ներկայ
գիրքը, որ թէև ամբողջապէս հայագիտական
չէ, բայց մեծ կապ և նշանակութիւն ունի
նաև Հայոց պատմութեան համար:

Հեղինակը այս զբոսով կամենում է բիւ-
զանդական զինուորական թեմերի բաժանման
նկարագիրը ապա իւր սկզբնաւորութեան ժա-
մանակներում: Թէև այս նիւթը ուսումնա-
սիրութեան առարկայ է եղել և ուրիշ զիտ-
նականների կողմից, որպիսին Enlay, Rambaud,
Ramsay, Schlumberger, Bury և մանաւանդ
Ֆրանսիացի զիտնական Diehl,** բայց այս բո-
լոր զիտնականները օգտուել են միայն Թ. և
Ժ. զարու աղբիւրներից, զինուորապէս կոս-
տանդին Ժիրանաճնից, անտես անելով Ը.
զարու յունական և ապա արաբական աղ-
բիւրները: Հեղինակը վերջին աղբիւրներն ևս
ուշագրութեան առնելով, մի նոր և լիակա-
կատար ուսումնասիրութիւն է տալիս:

Հեղինակը նախ պարզում է Եռստինիա-
նոս մեծի (527—565) օրով կատարուած փո-
փոխութիւնները: Դիոկղետրիանոս և Կոստան-
զին մեծ, հռոմէական պետութեան նոր կազ-
մակերպութիւն տուող կայսրները, այն ինչ
զինուորական և քաղաքական հաստատու-
թիւնները բաժանել էին միմեանցից, Եռս-
տինիանոս ընդհակառակն քաղաքական ընդհ-
պաշտօնիային զինուորական իրաւունքներ ևս
տուեց: Եզրիպատսի կուսակալը մի և նոյն ժա-
մանակ զինուորական պետն էր նահանգի, որ
600 հոգուց բաղկացած մի զօրագունդ ունէր
իւր ձեռքի տակ, խառնաշառ Աղեքսանդրիայի
մէջ խաղաղութիւն պահելու համար: Պատմա-
կան մի երեւոյթ, որ աւելի ընդարձակ կերպով
տեղի է ունենում Թ. զարում, երբ զինուո-
րական թեմերը նոր կազմակերպութիւն են
ստանում: Սակայն զինուորական թեմերի
բաժանման համար շատ աւելի կարևոր նշա-

* Առաջին երկուսը քաղցնանում են հայերէն.

** L'origine du régime des Thèmes dans l'em-
pire Byzantin, Paris, 1896.

նախութին ստացան Մաւրիկոս (582—602) կայսեր օրով հաստատուած Ափրիկայի և Իտալիայի էքզարխսութիւնները: Պետութեան արեւմտեան մասը այդ ժամանակ շատ շփոթուած էր Հանգորարդների և Կարուլների (Մաւրիգների) արշաւանքներով: Exarchus նոյն պաշտօնն ունէր ինչ որ magistri militum per Italiam: Էքզարխին են ենթարկուած զինուորականից զատ բոլոր քաղաքական պաշտօնականները: Նա խառնուած էր մինչև իսկ եկեղեցական գործերի մէջ: Է. դարում պապեր էին աթոռից զրկուած կամ հաստատուած էքզարխների ձեռքով: Նոցա զիրքը այնպէս մեծ էր, որ յաճախ ապստամբում էին կայսրից, անկախ իրենց երկիրը կառավարելու համար: Այսպէս էր օրինակ Գրեգորիոս կուսակալը Հերակլի ժամանակ: Ամենայն հաւանականութեամբ նման կազմակերպութիւն է ստանում և արեւելքը. բայց աղբիւրները շատ կցկտուր տեղեկութիւններ են տալիս այդ մասին: Առաջին հեղինակը, որ զինուորական թեմերի բաժանման լրակատար նկարագրութիւն է տալիս Կոստանդին Ժիրանածին կայսրըն է (911—947): Նորա տուած տեղեկութիւններից երևում է, որ արեւելքի զինուորական թեմերի կազմակերպութիւնն սկսւում է Հերակլի օրերից (610—640): Է. դարու առաջին քառորդը բիւզանդական պետութեան ամենազարգացած ժամանակներից մէկըն էր: Ավարները, Պարսիկները և ապա Աւարները միմեանց յետեւից սպառնում էին ոչնչացնել պետութեան զօրութիւնը: Պետութիւնն իւր բոլոր ուշադրութիւնը զինուորական կազմակերպութեան վերայ պիտի դարձնէր: Զօրքը եօթ մասի կամ եօթ զինուորական թեմերի էր բաժանուած. առաջինը կայսերական թիկնապահ զօրքն էր, երկրորդը Անատոլիայի բանակը և երրորդը Հայաստանի (τὸ Ἀρμενιάκων θέμα), վերջին երկու օր պէտք է Աւարների դէմ կռուէին: Զորորդը Թրակիայի բանակն էր, չինգերորդը և վեցերորդը Աֆրիկայի և Իտալիայի էքզարխսութեան բանակները, վերջապէս եօթերորդը՝ նաւատորմը:

Անատոլիայի Հայաստանի և Թրակիայի զօրապետները կոչւում էին πατρίκιος καὶ

στρατηγός. Այս իրողութիւնը հաստատում է Եուստինիանոս Բ-ի ժամանակներից 687 թ. մնացած մի փաստաթղթով (Mansi X. 1. 737): Եուստինիանոս Բ. Պետութեան հռչակարկան և ազնուական ներկայացուցիչների ժողովի մէջ հաստատում է Զ. աիեղերական համարուած ժողովի վճիռները, նորա հօր օրով 680/1 թ. որոշուած ներկայացուցիչների մէջ առաջին տեղը բռնում են բարձրաստիճան եկեղեցականները, այսինքն պատրիարքները (Կ. Պօլսի Աղէքսանդրիայի. Անտիօքի և Երուսաղեմի) և պապի ներկայացուցիչը և սենատրի, ապա մետրապօլիտներն ու եպիսկոպոսները, որոնք գտնւում են կայսերական մայրաքաղաքում ... Աւերջապէս զինուորական մեծ բանակների ներկայացուցիչները որոնց թուում նաև Հայաստանիւր, Զինուորականներն այդ իրաւունքը ձեռք էին բերել հաւանօրէն Կոստանդին մօրուկի (պոպոնտոս) ժամանակ: Արդէն Մաւրիկիոսի ժամանակներից Հայաստանի բանակը բիւզանդական պետութեան մեծ և անկախ գնդերից մէկն էր, որի պետը στρατηγός Ἀρμενίας էր կոչւում, կամ ὁ στρατηγός τῶν Ἀρμενιάκων: Հայաստանի զինուորական թեմի սկզբնաւորութիւնը ծագում էր Եուստինիանոս մեծի ժամանակից: Հայոց և Հռովմայեացի հին բարեկամական յարաբերութիւնն, որ խանգարուած էր Թէոփոս մեծի օրերից, նորոգուեցաւ աւելի սերտ կերպով Թէոփոս կրտսերի ժամանակ: Անատոլիոս զօրապետը հրաման ստացաւ պալատից ամեն տեսակ զիւրութիւններ տալու Ս. Սահակի և Մեսրոպի քաղաքակրթական նըպատակներին: Թարգմանիչների գործունեութեամբ Հայաստանը քաղաքակրթապէս նուաճուած էր Բիւզանդիայի համար: Դորանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Պարսիկները իրենց զրաւած երկրները հանգիստ վայելել չկարողացան: Եուստինիանոս մեծ ևս մեծ ուշադրութիւն էր դարձնում արեւելեան սահմանադիւրի երկրների վերայ: Զինուորական փոքրիկ իշխանութիւնները վերջացնելով սահմանադիւրի համար բարձր զօրապետութիւն ստեղծեց: Առաջին զօրապետը (στρατηγός) Թիոսան էր: Դորանով Եուստինիանոս հայ նախարարներին կապեց

պետութեան հետ, յետագայ դարերի լուսազոյն զօրապետներն ու զինուորականները հայ կամ վրացի ցեղերին են պատկանում:

Յուստինիանոս մեծի զծած այս քաղաքականութեան շնորհիւ, Հայերը բիւզանդական պետութեան պահպանութեան լուսազոյն ոյժերից մէկը դարձան և մեծ ծառայութիւններ մատուցին ոչ միայն զինուորական այլ և քաղաքական տեսակէտով (Սոցանից շատերը Ը. դարու սկզբում ազդեցիկ պաշտօններ ունէին և մինչև իսկ կայսերական դահլ ձեռք բերին: Այսպէս էր Փիլիպպիկոս Վարդանէս որ 711—713թ. կայսերական գահը բարձրացաւ: Անատոս Բ-ի (713—715) ժամանակ յայտնի զօրապետներ էին Լեոն (Պատարացի) Անատոլիայի և Արտաւազդ Հայաստանի բանակների համար: Արտաւազդը այնքան մեծ ազդեցութիւն ունէր, որ Կոստանդին Ծ-ի ժամանակ ձգտում էր կայսերական գահը բարձրանալ: Պատկերամարտ կայսրների կուսակցութեան ոյժը Հայերն էին (ազմում):* Բայց Հայոց զօրութեան ակնյայտնի նշանը հայկական հարստութեան հաստատութիւնն էր: Բարսեղ առաջին ձեռքով, որ բիւզանդական պետութեան զօրութեան լուսազոյն շրջանն է համարում: Փոքր պատրիարքի ստեղծով Բարսեղ Արշակունեաց հայ թագաւորների սերունդն էր:

Յիտաւ սահմանազկի զօրքի մեծագոյն մասը կազմում էր հայ նախարարներից և ազատներից: Հաւանորէն այս զօրապետի խորհուրդներով կայսրը կազմակերպեց սահմանազկի Հայոց գաւառները: Յուստինիանոսի քաղաքականութիւնը շարունակեցին և նորա յաջորդները: Մարիկիոսի օրով արեւելքի և Եւրոպայի շնորհիւ *τὸ θέμα τῶν ἀνατολικῶν* և *Ὀψίκησι* (Մարաքաղաք և շրջակայք), զօրապետութիւններին հաւասար յիշում է և Հայաստանինը Կոստանդին Ժիրանածնի խօսքերից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի զինուորական թեմը վերակազմուել է Հերակլի ժամանակ: Ը. դարում Հայաստանի զօրա-

պետութեան մէջ էին մտնում Պոնտոս, առաջին և երկրորդ (մնացածը Արարացոց իշխանութեան տակ էր ընկած) և մասամբ երրորդ Հայք, Կապադոկիայի մի մասը: Հայաստանի զօրապետը համարում է պետութեան ամենարարձր պաշտօններինց մէկը, ուստի և *Πατριάρχος καὶ στρατηγὸς τῶν Ἀρμενιάκων* բարձր տիտղոսն ունի, հաւասար Անատոլիայի զօրապետին կամ Պատլիայի էրզարխին: Այս ոճով հեղինակը խօսում է և զինուորական միւս թեմերի ու նաւատորմի ծառան մասին:

Զ. զլիւի մէջ հեղինակը պարզում է Իլլիրիկումի կուսակալութեան (*Praefectura*) պատմութիւնը, սլաւոնական ցեղերի արշաւանքները և նոցա նշանակութիւնը յունական ներկայ տարրի վերաբերութեամբ, մի հարց, որ բիւզանդական պետութեան պատմութեան էական խնդիրներից մէկն է զարձեւ *Fallmeyer-ի* *Eragmente aus den Orient-երկի* շնորհիւ: Բանասերներին յայտնի է, որ յիշեալ նշանաւոր զինականը ներկայ Եղներին Պերիկլէսների Պղատոնների սերունդ չէր համարում, այլ սլաւոնների: Մեր հեղինակն ևս թեթեւ կերպով շօշափում է այս խնդիրը և մինչև իսկ նոր աղբիւրներ մատնացոյց անում: Բայց մեր նպատակը լինելով միմիայն Հայոց վերաբերեալ խնդիրների մասին խօսել՝ զանց ենք անում:

Ը. դուին ևս ամբողջութեամբ հայապետութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող հատուածներից մէկն է: Հեղինակը այս գլխի մէջ կամենում է պարզել բիւզանդական պետութեան քաղաքական բաժանումները Ը. դարում: Մինչև Ը. դարը թեմերի բաժանումն ու կազմակերպութիւնը զինուորական էր և ոչ քաղաքական: Դիոկղե-տիանոսի և Յուստինիանոսի ստեղծած քաղաքական կուսակալութիւնները շարունակում են գոյութիւն ունենալ և այժմ, ինչպէս տպացուցանում են Զ. տիեզերական համարում (680 թ.) և հինգվեցեան (*quinisextum*) 693 թ. ժողովների արձանագրութիւնները: Ասիական մասի քաղաքական նահանգների մէջ

* Փակագծի մէջ անուած մասը մեծ յոյսերով նշանակալի միջոց ընթերցողներին առիթ ըստ պարզութեամբ:

յիշուած են և Հայոց գաւառները: Բայց յիշեալ ժողովների վճիռների տակ ստորագրող եպիսկոպոսներն իրենց անուան հետ ոչ թէ եկեղեցական թեմերն են նշանակում, այլ քաղաքական այն բաժանումները, որ հաստատուած էին Մաւրիկոսի ժամանակներէն: Բացառութիւն են միայն Հայոց երկու նահանգները, որ յիրաւի եկեղեցական թեմեր էին արդէն Յուստինոսից առաջ և նորանից յետոյ էլ կայսեր կարգադրութեամբ անկախօրինացին (Ա. և Բ. Հայք): Մի տախտակով ապա հեղինակը լուսարտնում է իւր միաբեր. 66:

Ա) Յուստինիանոսից առաջ բիւզանդական բաժնի նահանգներն էին՝

Առաջին Հայք. Սերաստիա մայրաքաղաքով և Սերաստպոլիս, Նիկոպոլիս, Սատալա և Կոզոնիա քաղաքներով:

Երկրորդ Հայք. Մելիտինէ, մայրաքաղաքով Արկա, Կոկիւսոն, Արարիսոս, Արիարաթիա, Կոմանա (Կապադովկիայի) քաղաքներով:

Միջին Հայք. Բասեն, Կարին կամ Թէոդոսիոպոլիս:

Սատրապիա, որի մէջ մտնում են ծովք մեծ, Հանձիթ, Ծովք, Հաշտանք, Բալիովիա գաւառները:

Բ. Յուստինիանոսի օրով (536) Լաւրաբոսոմէ Ժոթիւթոմէի բիւզանդական Հայաստանը հետեւեալ նահանգների էր բաժանուած:

Միջին Հայք. Յուստինիանոպոլիս (Բասեն), Թէոդոսիոպոլիս (Կարին), Նախյուստինեան առաջին Հայքից Սատալա, Նիկոպոլիս, Կոզոնիա, իսկ Պոնտոս Պոլեմոնից՝ միացած էին Տրապիզոն և Կերասոս ծովափնայ քաղաքները:

Երկրորդ Հայք. Սեբաստիա, Սեբաստոպոլիս, Պոնտոս Պոլեմոնից՝ միացած էր Կոմանա, իսկ Հելենոպոնտոսից՝ Բերիսա և Յելա քաղաքները:

Երրորդ Հայք. Մելիտինէ, Արկա, Արարիսոս, Արիարաթիա, Կոմանա (Կապ.), Կոկիւսոն:

Չորրորդ Հայք. Մարտիրոսաց քաղաք (Մարտիրոպոլիս) — Կիթաոնի՝ ծովաց աշխարհ, Հանձիթ, Ծովք, Հաշտանք, Բալիովիա գաւառները:

Յուստինիանոսից յետոյ՝ (այսինքն Մաւրիկոսի և Հերակլի ժամանակ) Հայաստանի բիւզանդական բաժնի նահանգներն էին՝

Մեծ Հայք. Տրապիզոն, Յուստինիանոպոլիս (եկեղեք գաւառ), Դարանաղեք (Կամախ), Կոզոնիա (Կոյլու հիսար), Նիկոպոլիս, Սատալա, Կիւրասոս*:

Երկրորդ Հայք. Սերաստիա, Հերակլեոպոլիս Բերիսա*, Սերաստոպոլիս*:

Առաջին Հայք. Մելիտինէ, Արկա, Կոկիւսոն, Կոմանա* (Կապ.):

Չորրորդ Հայք. (Յուստինիանոս ըստ Եովհ. կաթ.) — Մարտիրոսաց քաղաք, Դարա, Արձն, Ծովաց աշխարհ:

Յուստինիանա չորրորդ (հին չորրորդ Հայքը) — Դադիմա մետրապոլիտական մայրաքաղաքով, Սափոսա, Կիթաոնի՝ քաղաքներով և ծովք, Հանձիթ, Կարին, Բալիովիա, Պալու, Խարձեան, Հաշտան գաւառներով:

Միջին Հայք. Տայք:

Խորագոյն Հայք. Դուին:

Այս անուններն իրենց քաղաքական բաժանումներով և և մետրապոլիտական կեդրոններով հեղինակը հանել է Զ. և հինգվեցեան ժողովների ստորագրութիւններից՝ նախապէս միմեանց հետ բազմամիջ ձեռագիրներ համեմատելուց յետոյ: Աստղանշանով որոշուածները միայն հաւանական ենթադրութեամբ են նշանակուած, որովհետեւ ձեռագիրների մէջ քաց են թողնուած այդ անունների վերաբերութեամբ որ թեմերին են պատկանելը կամ ընդհանուր կերպով յիշուած են որպէս Հայաստանի մաս: Հեղինակը հիմնուելով հինգվեցեան ժողովի ստորագրութիւնների վերայ՝ կարծում է, որ Եովհանէս կաթուղիկոս և զՉորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսացպոլիս, այսինքն Նրփերկերա, Յուստինիանիստ, զնա զրէ ի դիւան արքունիս խօսքերով երկու մետրապոլիտութիւններ միացրել է չիթմամբ: *Ἐπαρχία Μεσοποταμίας ἀνω γῆραι Δ' Ἀρμενίας և Ἐπαρχία Δ' Ἀρμενίας ἀλλήs* տարբեր մետրապոլիտութիւն:

* Եովհ. Կաթ. 1853. Էմբի հրատ. եր. 40
Աղաւթում և Մարի կայսեր կապած փոփոխութիւններ:

ներ էին, ինչպէս պարզ երևում է Հինգվեցեան ժողովի եպիսկոպոսների ստորագրութիւններից. առաջին մտաւարտական քաղաքը Նիքիերան էր իսկ երկրորդը՝ Դադիման։ Զորրորդ Հայք անունը զործածական է դառնում առաջին համար։ Թէև Հին Զորրորդ Հայքից միայն մեծ ծովքն էր սորամար կազմում. իսկ Հին Զորրորդ Հայքը՝ որի կեդրոնը էր դարում Դադիման էր, յայտնի էր Յուստինիանիա Դ. անունով։ Բայց որովհետև էր. դարում Զորրորդ Հայքը Նիքիերա մայրաքաղաքով Արարիկների ձեռքն անցաւ, սփռական դարձաւ իրիզնդացիների ձեռքը մնացած Յուստինիանիա Դ-ը Հին անունով Զորրորդ Հայք կոչելու Այս իրողութիւնը հաստատում է Հինգվեցեան ժողովի արձանագրութեամբ։ Մի ուրիշ եպիսկոպոս ստորագրում է Մարիանոս անագիոս Եպիսկոպոս Կաթարէօն տի ք տօն Դրմենիօն Կիթառիճ որովհետև շատ հնուէ էր առաջին Հայքից, որի մայրաքաղաքը Մելիթանէն էր, ուստի և հեղինակը հետեւելով Հ. Ինճիճեանին ք տօն սրագրում է Ա. տօն Դրմ... Դադիման և Կիթառիճ, որ ըստ յոյն մատենագիր Գեորգիոս Կիսրացու (590—600 թ.) Հին Զորրորդ Հայքի մաս էին կազմում, Հինգվեցեան ժողովի մէջ Յուստինիանիա Դ. է կոչւում։ Հեղինակը այս դժուարութիւնը լուծելու համար այն ենթադրութիւնն է անում, թէ գուցէ որ և է պատճառով Խորհեան, Հաշեան, Հանճիթ գաւառները միացել էին Նիքիերայի նահանգին, որ Յուստինեանի ժամանակի Դ. Հայքն էր թէպէտ և Յուստինիանոսի կարգադրութեամբ կեղեցական բաժանումներն անձեռնմխելի մնային, բայց Մաւրիկիոսի օրով մասամբ փոփոխութիւնների ենթակից էր։ Դիտելեանոսի երկրորդ Հայքը կամ Յուստինիանոսի երրորդ Հայքը դարձաւ առաջին Հայք, այդպէս էր և որպէս կեղեցական թեմ։ Սերաստիան Դիոկղեմիանոսի առաջին Հայքը, իսկ Յուստինիանոսի և Մաւրիկիոսի երկրորդ Հայքը, որպէս կեղեց. թեմ ևս կոչւում էր երկրորդ Հայք։ Բայց այս համաձայնութիւնը միայն արտաքին էր։ Եպիսկոպոսների ստորագրութիւններին կից թեմերի մասին եղած նկատողութիւնները

ցոյց են տալիս, որ Սերաստիայի կեղեցական թեմը համապատասխան էր Դիոկղեմիանոսի առաջին Հայքին, միայն Յուստինիանոսի ժամանակից Բերիսան միացել էր սորա հետ։ Սակայն հեղինակը պնդում է, որ եպիսկոպոսների ստորագրութիւնները կեղեցական թեմերի բաժանումներին համապատասխան չեն, այլ այն ժամանակուայ քաղաքական բաժանման։ Իրրև փաստ մէջ է բերում Հինգվեցեան ժողովի եպիսկոպոսների ստորագրութիւնները։

Δεόντιος ἀνάξιος ἐπίσκοπος Σεβαστείας τῆς Β τῶν Ἀρμενίων ἐπαρχίας ὀρίσας ὑπέγραφα.

Καλλίνικος χάριτι χριστοῦ ἐπίσκοπος τῆς Κολωνεατῶν πόλεως τῆς μεγάλης τῶν Ἀρμενίων ὁρ ὄκ.

Φώτιος ἐλέψι θεοῦ ἐπίσκοπος τῆς Νικοπολιτῶν Φιλοχρίστου πόλεως τῆς μεγάλης τῶν Ἀρμενίων ὁρ. ὄπ.

Γρηγόριος χάριτι Χριστοῦ ἐπίσκοπος τῆς Ιουαταλέων (Σαταλέων) πόλεως τῶν μεγάλης τῶν Ἀρμενίων ἐπαρχίας ὄπ.

Այս բոլոր ստորագրութիւնները ցոյց են տալիս, որ քաղաքական բաժանման համեմատ են ստորագրում եպիսկոպոսները և ոչ կեղ. թեմերի։ Ուրեմն Յուստինիանոս Բ-ի ժամանակ ևս երբ գումարուեցաւ Հինգվեցեան ժողովը անփոփոխ էին մնացած Մաւրիկիոսի բաժանումները։

Ութերորդ դարի սկզբներից մի նոր կազմակերպութիւն է սկսում ամբողջ պետութեան մէջ, զինուորական բաժանումները մի և նոյն ժամանակ քաղաքական են դառնում. զինուորական պետերի ձեռքն է անցնում նաև նահանգների քաղաքական կառավարութեան ղեկը Լեոն Իսաւրացու (716—741) օրով։ Միայն Անատոլիայի մեծ թեմը երկուսի է բաժանում. եւրոպական Թրակիան միանում է Եփեսոսի շուրջը գտնուած երկրների հետ և կազմում է το θέμα τῶν Θρακησίων. Կոստանդին Կոպրոնիմոսի ժամանակ (741—775) երկուսի է բաժանւում և մայրաքաղաքի կամ կոյսերական թիկնապահ բանակի ղորապետութիւնը, հաւանորեն հայազգի Արտաւազդ Կիւրապաղատի ազդեցութեամբ յետոյ, որ նոյն բանակի ղորա-

պեան էր և կոչուած էր πατρίκιος καὶ κόμης τοῦ Ὀφικίου Այս զօրապետութեան արեւելեան մասը Անկիւրա մայրաքաղաքով կազմուած է թέμα τῶν Βουελλάριων. Թեոփանէսի տեղեկութեանց համաձայն Լեոն Դ. (775—780) Արաբների դէմ սկսած արշաւանքի ժամանակ կայսերական թիկնապահներին Անատոլիայի և Հայաստանի բանակների հետ մասնակցում էին և յիշեալ երկու նոր զօրապետութիւնները: Այս հեղինակը արաբական աղբիւրներից քաղում է այն տեղեկութիւնները, որ վերաբերում են Թ. դարու առաջին կիսի զինուորական թեմերի փոփոխութեան՝ յատկապէս Լեոն Ե. հայ կայսրի (813—820), Միքայէլի և նորա օրդի Թեոփիլոսի ժամանակ: Արաբացի մատենագիրներն են իրն Խորդադրեհ և Կողամա իրն Զափար — էլ — Բաղդաւար: Առաջինը ժամանակակից է յիշեալ կայսրներին: Իսկ երկրորդը օգտուել է Խորդադրեհ-ից, բայց իւր կողմից թանգագին նորութիւններ ևս է աւելացնում: Երկու աղբիւրներն էլ հետաքրքրական են մեզ համար և հայագիտական տեսակետով: Խորդադրեհ-ի գրքի մէջ այլ ևս Հայաստանի զինուորական մեծ թեմը ամբողջութիւն չէ, այլ երեք մասի բաժանուած: Խարզուն, ալ Արմինիակ, որի մէջն են մանում Կողոնիան և վեց ուրիշ բերդեր, և Խալդիա վեց բերդերով: Բայց Հայաստանի զօրապետներից մէկը՝ ալ Արմինիակինը՝ դարձեալ պատրիկ տիտղոսն ունի: Այժմ պատրիկների թիւը կրկնապատկուել է, նոցանից վեցը մայրաքաղաքում են ապրում և վեցը գաւառներում: Այդ փոփոխութիւնը կատարուեցաւ երբ Կոստանդին յիմարարար իւր իրենէ մօրը երկրորդ անգամ կառավարչակից նշանակեց 793 թ. յետոյ: Հայաստանի զօրքը, որ ի սկզբնէն Կոստանդին կայսեր կուսակից էր և շատ զգաւոր իրենէի բռնութիւնների համար, յուզուեցաւ թուրամորթ կայսեր նոր կարգադրութեան համար և յետ պահանջեց իւր Ալեքսիոս (ըստ Չամչեանի Մուշեղ, Հատ. Բ. եր. 424) զօրապետին, որ Կ. Պօլիս էր կանչուել և զրկուել իւր պաշտօնից: Կայսրը Հայոց խնդիրը կատարելու տեղ՝ ընդհակառակ բանտարկեց Ալեքսիոսին և կուրացրեց: Հայերն

այս ապերախտութիւնից աւելի զայրացած՝ բանդարկեցին կայսեր հաստատած նոր զօրապետ Թեոփորոսին և ապստամբեցան նորանից: Սորա հետեանքն այն եղաւ, որ բաղմաթիւ Հայեր պատժուեցան կամ ուղարկուեցան հեռուոր երկրներում պատերազմելու: Այս ապստամբութեան հետեանքն էր և Հայոց զինուորական թեմի բաժանումը, որի մասին տեղեկացանք Խորդադրեհ-ի գրքից: Խարզիանի թեմը կազմուած էր Դադաւիա Ա. և Կապադովկիա Ա. ից, այն ինչ մինչև այդ ժամանակ գնդապետութեան մի կեդրոն էր այն. Խալդիան բաղկացած էր Պոնտոս Պոլեմոնիակոս գաւառից և Փադիսի մի մասից: Այս նոր բանակների զօրապետներն այլ ևս այնպիսի բարձր տիտղոս չունէին, ինչպէս Հայաստանի թեմեր, այլ κλεισοῦργησεν սահմանի բերդապետ էին կոչում: Հարկւր տարի յետոյ միայն στρατάρχης տիտղոսն ստացան:

Իրն Խորդադրեհ-ից դատ զօրքի թուի մասին շատ թանգագին տեղեկութիւններ է տալիս և Կողոմանի Պետութեան զօրքի թիւը 99000 է հաշուած, բայց պակաս է Մակեդոնիայի թեման: Հայոց բանակներից՝ Խարզիան, Ալ-Արմինիակի Ալ-Խալդիա՝ իւրաքանչիւրը 4000 հոգուց է բաղկացած: Սակայն Դեյցեր իրաւացի կերպով կասկածում է Ալ-Արմինիակի թուի ճշգրտեան վերայ: Պափլագոնիայի զօրքի թիւը 10000 է նշանակուած և յետին բանակներից մէկն էր, այն ինչ Ալ-Արմինիակի զօրապետը պատրիկ տիտղոսն ունէր և նշանաւոր բանակներից էր, միայն 4000: Թէև Հայաստանի բանակը Թ. դարում, ինչպէս տեսանք երեք մասի էր բաժանուած և նախկին փառք չունէր, բայց և այնպէս հեղինակը հաւանական չէ համարում, որ Հայաստանի բանակը 4000 հոգուց բաղկացած լինէր: Կողամայի արտադրութեան էր սխալ է համարում այդ Պափլագոնիայի բանակի թիւը 4000-ի է իջեցնում, իսկ Հայաստանինը 10000 շինում: Պետութեան ամենամեծ բանակները նոյն իսկ Թ. դարում արեւելքում էին. Անատոլիան ունէր 15000, Հայաստանը տասը և Բուկեւարիոնը ութ հազար հոգի: Այս Դեյցերը իրն Խորդադրեհ-ի տուած տե-

զեկութիւնների հետ համեմատում է Կոստանդին կայսեր տեղեկութիւնները բանակների կեդրոնական քաղաքներն ու բերդերը որոշելու համար:

Մեզ համար Սարձեան և Սալգիւս զինուորական շրջաններից աւելի՝ որ մասամբ բուն Հայաստանից դուրս էին ընկնում, հետաքրքրական է Արմենիական թեմի բաժանումներն ու քաղաքները: Սորգադքեհ-ի տեղեկութեան համաձայն Հայաստան 16 բերդ ունէր Կողոնիա կեդրոնով: Իսկ Կոստանդին մի առ մի յիշում է ընդ ամենը 15 բերդ Կողոնիայի հետ միասին: Գուցէ Սորգադքեհ-ը Կողոնիան սխալմամբ 16 թուից դուրս է հաշուել: Հայաստանի թեմի մաս էր Գ. Կապադովկիան իւր եօթ քաղաքներով. Ամասիա, Սալխիսոս, Անդրապատ, Ամինոսոս, Նեոկեսարիա, Սինուպ, Կեդրոնական բանակն հաստատուած էր Կողոնիայում և սորա շրջանին էին պատկանում Արարբակէոն, Նիկոպոլիս, և Թիֆլիսէ (Վաղարշակերտ Ալաշկերտում): Ապա յիշուում է Սերաստիան, որ երկրորդ Հայքի թեմն էր: Հեռն Ծ. հայ կայսրից յետոյ Հայաստանի հետ էր միացած Կոմոդրոմոս, Տարիաս, ապա Լարիսոս, որ Սերաստիայի մասն էր: Կամախ կամ Անին հին Հայոց, Կողոնիայի մաս:

Իններորդ զլխի երրորդ պրակում հեղինակը նկարագրում է մի շատ հետաքրքրական երեւոյթ: Արարների և Բիւզանդացիների վարած պատերազմների եղանակը: Արարական աղբիւրներից այս մասին տեղեկութիւն է տալիս Կոզոմաս իսկ բիւզանդացիներից Նիկեփոր կայսրը: Ըստ Կոզոմայի տարին երեք անգամ արշաւանք է սկսում. գարնան Մայիսի 11-ին, երբ ձիերը լաւ գերացած են կանաչ խոտով և շարունակուում էր 30 օր, այսինքն մինչև Յունիսի 10-ը: Զոսան և հինգ օրուայ հանգստութիւնից յետոյ սկսում է ամառուայ արշաւանքը, որ 60 օր է տևում: Չմեռուայ արշաւանքն սկսում է փետրուարին, տեղութիւնը միայն 20 օր պէտք է լինի, որպէս զի իւրաքանչիւր հեծեալ իւր պաշարը հետն առնել կարողանայ: Ըստ Նիկեփորի արարական զօրքերը հաւաքուում են

սահմանազլխի վերայ օգոստոսին և պատերազմն սկսւում է սեպտեմբրին: Բիւզանդացիները այդ շարժման լուրն առնելուն պէս իրենց կողմից տրապեցիտներ կամ այսպէս կոչուած τασιναχια (տասարք, տասնակիք) են ուղարկւում տեղեկութիւններ բերելու թշնամու բանակից: Վաճառականների և սահմանազլխի Էմիրների միջնորդութեամբ, որոնց նամակներ և ընծաներ են ուղարկում տեղեկութիւններ պէտք է քաղել թըշնամու նպատակների թուի մասին և թէ քանի՞ հոգի հեծեալօր և քանիսը հեռեակ են, զօրապետների անունները և ինչ Այս տեղեկութիւնները քաղելուց յետոյ՝ պէտք է հաւաքել բոլոր բանակները և փակել կիրճերը: Մի քաջ գնդապետ հեծեալօրով ուղարկւում է թշնամիների դէմ՝ նոցա մեր երկիրը մտնելուց առաջ: Այդ գնդապետը դիտւում է թշնամու բոլոր շարժումները՝ և տեղեկութիւն է հաղորդում ընդհանուր զօրապետին:

Բիւզանդական զօրքերի շարժման դժեւրի մասին տեղեկութիւն է տալիս Կոստանդին Ժիրանաճին, երբ նկարագրում է Բարսեղ Ա.-ի (867—880) մի արշաւանք: Երբ կայսրն էր անցնում բանակի գլուխը՝ առաջին իջևանը Մալազիան էր, ուր հանդիպում էին պալատական թիկնապահների և ասիական պահապանների զօրապետներն իրենց գնդերով: Երկրորդ իջևանում Դորուլումում հանդիպում էր Թրակիայի զօրապետը. Անատոլիայի և Սելեկիայի զօրապետները հանդիպում էին Կաթորկիոնում: Եթէ արշաւանքը Տարսնի վերայով էր, այն ժամանակ մնացած բանակները, որոնց մէջ և Հայաստանինը՝ կայսեր առաջն էին դուրս գալիս Կաթորկիոնում: Իսկ արեւելեան գաւառներից Կապադովկիայի Սորձեանի, Բուկելարիոնի բանակները միանում են կայսեր հետ Կողոնիայում, Հայաստանի, Պափլագոնիայի և Սերաստիայի զօրքերը Կեսարիայում: Եթէ արշաւանքը Թիֆլիսէի (Ալաշկերտ) վերայով էր, Հայոց գնդերը միանում էին Բաթիւ Բէաքսում, որ Սերաստիայից քիչ հեռիս էր գտնւում: Արարների դէմ վարած պատերազմների ժամանակ զլխաւոր գործն հե-

ձեկազօրն էր կատարում (նշանաւոր էր մանաւանդ հայ հեծեկազօրը)։ հետեակ զօրքերը ծառայութեան և զինակրութեան պաշտօն էին կատարում։ իւրաքանչիւր հեծեալ իւր զինակիրն ունէր։

Վերջապէս Թ. գլխի Դ. հատուածում հեզինակը նկարագրում է բանակի կազմակերպութիւնը՝ քաղելով իրն խորհարկէի գրքի Ֆրանսերէն թարգմանութիւնից։ Ամբողջ զօրքը բաղկացած էր 120000-ից։ իւրաքանչիւր պարիկ ունէր 10000 զինուոր և երկու Տուրմարկ՝ որ 5000 հոգու հրամանատար էր։ Իւրաքանչիւր Տուրմարկի ենթարկուած էին հինգ դրունգեր՝ հազարապետ սոցա ենթարկուած էին հինգ կոմսներ իւրաքանչիւրը 200 հոգու գլխաւոր։ կոմսի իշխանութեան ենթարկուած էին հինգ կոնդարկ, որ քառասնապետներ էին (առաջ յիսնապետ), և իւրաքանչիւրը նոցանից իւր ձեռքի տակ չորս դեկարկ՝ տասնապետ ունէր։

Սպաների ռոճիկը ամենաշատը 40 Ֆ. ոսկի էր, բայց կային և քիչ 36, 24 12, 6 մինչև 1 Ֆ. ոսկի ոտացողներ։

Զինուորի ռոճիկը 16—12 դենար (մօտ 8—5½ ր.) տարեկան և բոլոր պիտոյքները։

Ամբողջ զինուորական դասը ռոճիկների քանակութեամբ հետեեալ կարգերի էր բաժանուում.

ա. Անատոլիայի, Հայաստանի, Թրակիայի մեծ զօրապետներից իւրաքանչիւրն ստանում էր 40 Ֆ. ոսկի = մօտ 18276 ր.

բ. Օփսիկիոնի (կայս. թիկնապահները), Բուկկլարիոնի, և Մակեդոնիայի զօրապետներից իւրաքանչիւրը 30 Ֆ. = 13705 ր.

գ. Կապադոքիայի, Խարձանի, Պափլագոնիայի, Թրակիայի (գաւառը և ոչ մեծ բանակը) Կոլոնիայի գնդապետներից իւրաքանչիւրը 20 Ֆ. = 9030 ր. Այս կարգին են պատկանում նաև Խալդիայի և Միջագետքի հրամանատարները. առաջինն ստանում էր 10 Ֆ. ոսկի և նոյնքան էլ մաքսերից, իսկ երկրորդի ռոճիկը հաստատ որոշուած չէր, բայց մաքսերի եկամուտը նորանն էր.

դ. Կարգին պատկանում էին փոխ ծովակալները.

է. Սեբաստիայի, Լիւկանդոսի, Սելու-

կիայի և Լէոնտոկոմիսի բերդապահներից իւրաքանչիւրն ստանում էր հեզական Ֆ. 2284 ր.

Այս տեղ հեզինակը վերջացնում իւր բազմակողմանի և բովանդակութեամբ հարուստ աշխատութիւնը, խոստանալով երկրորդ մասի մէջ նկարագրել Կոմսներներից մինչև բիւզանդական պետութեան անկումը. անշուշտ խոստացուած երկն էլ նոյնչափ հետաքրքրական կլինի հայագիտութեան համար, որքան և առաջինն էր։ Յաջողութիւն ենք ցանկանում։

* * *

Հնագիտական։ Հայոց բանասէր հասարակութեան լաւ յայտնի գերմանացի Բէլկ և Լէման գիտնականների Հայաստանում կատարած ծանապարհորդութեան և զի. տերի մասին մենք արդէն առիթ ենք ունեցել միանգամ ծանօթութիւն տալու մեր «Հայագիտական տեղեկութիւններ»-ի մէջ.* Այժմ մի քանի խօսքով կկամենայինք ծանօթացնել այն տեղեկագրի հետ, որ յարգելի գիտնականները հայրենիք վերադառնալուց առաջ՝ անցեալ ամառ Երզնկայից ուղղել են Բերլինի գիտութեանց ժեմարանին։ Այս գիտնական ծանապարհորդութեան նպատակն էր բեւեռագիր արձանագրութիւններ որոնել հին խաղիական կամ Ուրարտուի սահմաններում։ Մենք յիշել ենք, որ միայն Վանայ լճի շրջակայքում յաջողուել էր նրանց վախճան արձանագրութիւն գտնել։ Այստեղ իրենց գործը վերջացնելուց յետոյ՝ յարգելի գիտնականները շարունակել են իրենց ծանապարհը Վանայ լճի հարաւային ափերով գէպի Բիթլիս, Սյեբք, ապա Ծեղիրի վերայով գէպի Մոսուլ, այնտեղից կրկին դարձել են Նիմրուզի վերայով գէպի Բըվանդուզ։ Այս վայրերի ուսումնասիրութիւնն անհրաժեշտ էր Ասորեստանայց և Ուրարտացիների պատերազմների որպիսութիւնը հասկանալու համար։ Այսպիսի լեռներով և նեղ կիրճերով անկարելի էր մեծ բանակներ անցկացնել։ Կելի-գեափուր, որ գտնուում է Սեզեկան և Տուպրանա գիւ-

ղերի մէջ, գիտնականները չորս արձանագրութիւն են գտել, երկուսը Ասորեստանայց և երկուսը խալդիական լեզուով: Երկու շարքով շարչարուելուց յետոյ յարգելի գիտնականները հաղիւ կարողացել են կարգաւ այս արձանագրութիւնները Մի սեան վերայ են քանդակուած արձանագրութիւնները, սեան վերին մասը տարաքաղաքար բնկած է հաւանօրէն հին ժամանակներէ: Արձանագրութիւնը վերաբերում է Սարգոն Բ-ի և Ռուսաս Ա-ի պատերազմներին: Ռուսաս ինքնասպանութեան է զիմել, երբ Սարգոն (որի կողմից պատմուած է) նորա աստծուն՝ Մուսասիրի խալդի-ին աւար է վերցնում: Այստեղից եզրակացրել էին գիտնականները, թէ Մուսասիրին հեռու չպէտք է լինէր սեան շրջակայքից և յիշաւ յաջողել է գտնել նրանց Մուսասիրի տեղը:

Երկու գիտնականներն այստեղ բաժանուած են միմեանցից: Բելլը Վան է վերադառնում, ուր դարձեալ նոր արձանագրութիւններ և հատուկոտորներ է գտնում: Վանից Բելլը Թոփրագ-գալէ է անցնում պեղումներ անելու: Գիւտերից նշանաւոր է ոսկորից շինած մի մանեակ բեւեռագրութեամբ ծածկուած: Դսկ Լէմանը Մոսուլի (Նիքիկերաի) (Մուֆարկին) վերայով Սիջէ է անցնում ուր հին ճանապարհորդների անդեկութեանց համաձայն մի ջրայր պէտք է լինէր: Երազէր Սիստերի ընդօրինակութեանց վերայ հիմնուելով այն եզրակացութեան էր հասել, որ այնտեղ մի արձանագրութիւն պիտի լինէր Թագաթմադասուրի (Թուկաթմ-Նիներ) և Ասորեստիւրասլի Լէման ուղղում է սխալը յայտնելով՝ որ երկրորդ և երրորդ արձանագրութիւնները Սաղմանասար Բ-ինն են և ոչ յիշեալ անձնաւորութեանց: Նա գտել է երկու մինչև այժմ անյայտ արձանագրութիւններ, դարձեալ Սաղմանասարի գրած: Այս բոլոր արձանագրութիւնները պատմում են Սաղմանասարի և Ուրարտուի Արամ Թագաւորի պատերազմների մասին: Հին Թագաւորը) խալդիական մի ամբողջ գտնուում է Բալուքաքի մօտ: Այստեղից Լէման անցել է Մանձկերաւ ուր խալդիական բերդերի և ամրոցների հետքեր է գտել: Ստորերկրեայ աս-

տիճանների վերայ Արգիստի-հինի որդի Ռուսաս Բ-ի մի արձանագրութիւն է գտել, որ նորութիւններ է բովանդակում: Այստեղից գերմանացի գիտնականն անցել է Սարբերդ և ապա Բեոմիւր խան-Ողուլի Միւլրախ և Մոլտրէ: Ճանապարհորդների նկարագրութիւնից յայտնի էր Սորդուր Գ-ի արձանագրութիւնը, որ Լէման նորից վերձանում և սրբագրում է: Նիքրաթի ափին ժայռի վերայ խալդիական աստիճաններ և այլերէ նկատել նա, որ խալդիական ամրոց է համարում կամրջից ոչ շատ հեռու: Սարգուրինի պետութեան արեւմտեան սահմանն էր այս:

Երկու գիտնականների տաժանելի աշխատութեամբ ուսումնասիրութեան համար մեծ նիւթ մատակարարուեցաւ: Մի երկու տարուց յետոյ, երբ նորանոր ուսումնասիրութիւններ կհրատարակուին Հայաստանի նախկին պատմութեան վերաբերութեամբ և ի՞նչ գիտէ, ի՞նչ նորութիւններ պիտի լսենք կարճ ժամանակից յետոյ:

*
* *

Հայագիտութեան համար նշանաւոր նորութիւն է Լազարեան Ճեմարանի յայտնի աւետարանի լուսատիպ հրատարակութիւնը: մասնագիտական դասարանների խորհրդի որոշմամբ և պատուաւոր հոգաբարձու իշխան Արամելիք—Լազարեանի նիւթական օժանդակութեամբ: Վերնագիրն է. Ս. Լազարեան լուսատիպ հրատարակութեան համար հիմնադրուած է 1887: Այս հիմնաւոր գործի մասին կիսունը հետեւեալ համարում:

Գ. Վ. Յովսէփեան.

